

Հավելված  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
մայիսի 27-ի N 869 - Ա որոշման

ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՏՐԱՆՇ 2-Ի ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՈՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԱՆՔԸ ՇՐՋԱՆՑՈՂ  
ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՄ 29+600-ԿՄ37+544.68 ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ  
ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող ավտոճանապարհի կմ 29+600-կմ 37+544.68 հատվածի վերակառուցման մանրամասն նախագծի (այսուհետ՝ նախագիծ) հատուկ համալիր փորձաքննություն անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի, 5-ի շրջանակներում վերակառուցվող ճանապարհահատվածների մանրամասն նախագծերի, ինչպես նաև ծրագիր 2-ի, 3-ի, 4-ի և 5-ի շրջանակներում վերակառուցվող ճանապարհահատվածների հատուկ համալիր փորձաքննություն անցած նախագծերի փոփոխված նախագծերի հատուկ համալիր փորձաքննություն անցկացնելու, ժամանակավոր փորձաքննական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» N 508-Ա որոշմամբ ստեղծվել է ժամանակավոր փորձաքննական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

Ընդհանուր առմամբ տեղի է ունեցել հանձնաժողովի երկու նիստ՝ 14.12.2018 թ.-ին և 15.02.2019 թ.-ին:

Հանձնաժողովի եզրակացությունը կազմվել է նախագծի առանձին բաժինների վերաբերյալ՝ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի փորձաքննության դրական եզրակացության, «Հ.Ս ՊՈՒՈ» ՍՊԸ-ի փորձաքննության դրական եզրակացության, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձաքննության դրական եզրակացության, ինչպես նաև հանձնաժողովի կողմից կազմակերպված քննարկումների արդյունքների հիման վրա:

Նախագծի իրականացման համար հիմք են ընդունվել հետևյալ շինարարական նորմերն ու ստանդարտները՝

- ՀՀՇՆ IV-11.05.02-99 Ավտոմոնոբիլային ճանապարհներ
- RAS Richtlinie for die Anlage von Strassen /Գերմանիա/
- RAA Richtlinie for die Anlage von Autobahnen /Գերմանիա/
- AASHTO, Պետական մայրուղիների և տրանսպորտային պաշտոնյաների ամերիկյան ասոցիացիա:

## II. ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել՝

1. «Շրջանակային ֆինանսավորման համաձայնագիր (Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր)», կնքված Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2009 թվականի սեպտեմբերի 15-ին,

2. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2» վարկային համաձայնագիր (Վարկ թիվ 2729-ARM), կնքված Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին,

3. «ԲՖԳ-ի (L2561-ARM և L2729-ARM) ծրագիր 1 և 2-ի ծրագրի կառավարման Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր Հայաստանում, ըստ ծախսված ժամանակի 80% և միանվագ 20%» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ կնքված 2012 թվականի մայիսի 18-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և «Սաֆեջ Էս.Ա. և Էպտիսա» կազմակերպության միջև:

4. «ԲՖԳ-ի (L2561-ARM և L2729-ARM) ծրագիր 1 և 2-ի ծրագրի կառավարման Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր Հայաստանում, ըստ ծախսված ժամանակի 80% և միանվագ 20%» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի թիվ 9 համաձայնագիրը՝ կնքված 2018 թվականի ապրիլին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի և «Սաֆեջ Էս.Ա. և Էպտիսա» կազմակերպության միջև:

Նախագծի վերաբերյալ տրվել են հետևյալ փորձաքննությունների եզրակացությունները՝

1. Նախագծված ճանապարհային մասի և հաղորդակցողիների տեղափոխման վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի դրական եզրակացություն (05.11.2018թ-ի N17/ՓՊ-323Փ),

2. Նախագծված լուսավորության վերաբերյալ «Հ.Ս ՊՈՒՈ» ՍՊԸ-ի դրական եզրակացություն (05.11.2018 թ.-ի NՓ-09/18),

3. ՀՀ բնապահպանության նախարարության ««Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական եզրակացություն (14.02.2019թ-ի ԲՓ-06):

### III. ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Ինժեներա-երկրաբանական հետազոտությունները կատարվել են ակնադիտարկման և հորատանցքերի հորատման եղանակով:

Ոսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են ճանապարհի հատվածի գոտու գրունտային շերտավորումները, հիդրոերկրաբանական պայմանները և լաբորատոր փորձարկումներով՝ գրունտների ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

Ճանապարհահատվածի նախագծման համար ընդունվել է I տեխնիկական կարգը, հաշվարկային արագությունը 100 կմ/ժ:

Երկայնական կտրվածքը նախագծված է ՀՀՇՆ IV-11.05.02-99 նորմատիվի պահանջների համապատասխան: Երկայնական կտրվածքի նիշերը կապված են պետական միկրոտոանկյունավորման կետերի հետ:

Ճանապարհահատվածի լայնական կտրվածքի հիմնական պարամետրերն են՝

- Երթևեկելի գոտիների քանաքը՝ 2
- Երթևեկելի շերտերի քանակը՝ 4
- Երթևեկելի մեկ շերտի լայնությունը՝ 3.6 մ
- Կողնակի լայնությունը՝ 3,75 մ
- Եզրային շերտի լայնությունները՝
  - ✓ բաժանիչ գոտու կողմից՝ 1,0 մ.
  - ✓ կողնակների կողմից՝ 2.60 մ.
- Բաժանիչ գոտու լայնությունը՝ 4.8 մ
- Հողային պաստառի լայնությունը՝ 26.7 մ

Հիմնական ճանապարհի պատվածքը բետոնից է:

Հիմնական ճանապարհի պատվածքի կառուցվածքն է՝

- Բետոնի հաստությունը՝ 260 մմ
- Խճային հիմքի հաստությունը՝ 180 մմ
- Ավազա-կոպճային ենթահիմքի հաստությունը՝ 150 մմ
- Կոպճային բնական շերտի հաստությունը՝ 180 մմ

Երկրորդական ճանապարհների և իջատեղերի պատվածքը ասֆալտաբետոնից է:

Երկրորդական ճանապարհների և իջատեղերի պատվածքի կառուցվածքն է՝

- Մանրահատիկ ա/բ-ի հաստությունը՝ 40 մմ
- Խոշորահատիկ ա/բ-ի հաստությունը՝ 60 մմ
- Խճային հիմքի հաստությունը՝ 200 մմ
- Ավազի շերտի հաստությունը՝ 100 մմ:

Տրանսպորտային հանգույցներում, անցումային արագացման-դանդաղեցման գոտիներում, T-աձև հատումներում ճանապարհային պատվածքը երկշերտ ասֆալտաբետոն է:

Անցումային արագացման գոտու լայնությունը ընդունված է ճանապարհի հիմնական շերտին հավասար, ինչպես նշվում է նորմերում: Անցումային-արագացման գոտիները շարժման հիմնական շերտից առանձնացված են բաժանիչ շերտով:

Նախագծված է տրանսպորտային հանգույց Ագարակ-Ոսկեվազ հատման կետում (կմ31+967): Ուղեանցը նախագծված է 2x18մ սխեմայով և ունի 8մ զարբարիտ: Ուղեանցի ձախ կողմի թևը ապահովում է անվտանգ կապ բնակավայրերի և Երևան-Գյումրի մայրուղու միջև: Հանգույցի հատվածում նախատեսված է լուսավորության համակարգի կառուցում:

Անվտանգությունը բարելավելու նպատակով նախագծում նախատեսված է ճանապարհային նշանների տեղադրում:

Նախագծով նախատեսված է համապատասխան արհեստական կառույցների (ուղեանց, գյուղտեխնիկայի վերգետնյա և ստորգետնյա անցումներ, խողովակներ, ստորգետնյա անասնանցումներ) կառուցումը:

Նախագծով նախատեսված է շինարարությանը խոճընդոտ հանդիսացող հաղորդակցողիների (որոգման և ջրամատակարարման համակարգեր, գազատարներ, էլեկտրամատակարարման համակարգեր) տեղափոխում և նորերի կառուցում:

#### IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, քննության առնելով Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող ավտոճանապարհի կմ 29+600- կմ 37+544.68 հատվածի վերակառուցման մանրամասն նախագիծը, կազմակերպել է աշխատանքային քննարկումներ, ինչպես նաև հանձնաժողովի երկու նիստ, որոնց արդյունքում փաստվեց, որ.

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացուցչի կողմից ներկայացվել են որոշ հարցադրումներ: Հարցադրումները ուղղվել են նախագծող կազմակերպությանը, որն տրամադրել է սպառիչ պարզաբանումներ:

- ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ներկայացուցչի կողմից ներկայացվել են որոշ հարցադրումներ: Հարցադրումներն ուղղվել են նախագծող կազմակերպությանը, որն տրամադրել է սպառիչ պարզաբանումներ:

- 2019 թվականի փետրվարի 15-ի նիստի ժամանակ «Արագածոտն» ԶՕԸ-ի ներկայացուցչի կողմից բարձրացվել է թվով 20 ջրատարների և նախագծված ճանապարհահատվածի հատումների բացակայության խնդիրը: Առաջարկվել է ևս մեկ անգամ աշխատանքային կարգով ուսումնասիրել նախագծում առկա լուծումները: «Արագածոտն» ԶՕԸ-ի ներկայացուցիչը և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի մասնագետները համատեղ ևս մեկ անգամ մանրամասն ուսումնասիրել են նախագիծը: Արդյունքում պարզվել է, որ նշված 20 ջրատարների հատումներից նախագծում ընդգրկված են թվով 17 հատումներ, իսկ 3 ջրատարի հատման լուծումները նախատեսված են հարակից կառուցվածքներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ջրատարների հատումների տեխնիկական լուծումները հանդիսանում են տիպային լուծումներ, որոշվեց աշխատանքային կարգով լուծել շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ:

- Նշված ճանապարհահատվածի ուղեգծին հարող տարածքներում հաղորդակցողիների (որոգման և ջրամատակարարման համակարգեր, գազատարներ, էլեկտրամատակարարման համակարգեր) տեղափոխման աշխատանքները ներառված են նախագծային փաստաթղթերում, որոնք համաձայնեցված են սեփականատերերի հետ:

- Իրականացվել է աշխատանքային հանդիպում ՀՀ Արագածոտնի մարզպետարանում ազդակիր մարզպետարանի ներկայացուցիչների և համայնքների ղեկավարների մասնակցությամբ:

Հիմք ընդունելով՝

ա) նախագծված ճանապարհային մասի և հաղորդակցուղիների տեղափոխման վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի դրական եզրակացությունը (05.11.2018 թ.-ի N17/ՓՊ-323Փ ),

բ) նախագծված լուսավորության վերաբերյալ «Հ.Ս ՊՌՈ» ՍՊԸ-ի դրական եզրակացությունը (05.11.2018 թ.-ի NՓ-09/18),

գ) ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական եզրակացությունը (14.02.2019 թ.-ի ԲՓ-06).

հանձնաժողովը երաշխավորում է, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի Ագարակ համայնքի մոտ հնագիտական տեղանքը շրջանցող ավտոճանապարհի կմ 29+600-կմ 37+544.68 հատվածի վերակառուցման մանրամասն նախագծային փաստաթղթերը նախագծողի տեխնիկական առաջադրանքի շրջանակներում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ